աշտարակեցւոյն. կանոնգիրքն։ Զաբրահամու աղբաթանեցւոյն ի դվին. ուխտանէս եպիս-կոպոսն ուռհայի. տէր յովհաննէս ի նոյնն. Կիրակոս գանձակեցին ի նոյնն։ Զեզրի քառասնակերտացւոյն ի կարին. յովհաննէս եպիսկոպոսն տարօնու. տէր յովհաննէս ի նոյնն. սամուէլ անեցին ի նոյնն. Կիրակոս գանձակեցին ի նոյնն։ Զյովհաննու օձնեցւոյն, ինքն իսկ ի նոյնն. տէր յովհաննէս ի նոյնն. սամուէլ անեցին. Կիրակոս գանձակեցին։ Զսիոնի բիսոնեցւոյն. կանոնգիրքն։ Զզաքարիայ ձագացւոյն ի չիրակաւան. Սահակ եպիսկոպոսն տայոց, մականուանեալն մուռտ. Վարդան վարդապետն Գանձակեցի ի պատ-մագիտութեան իւրում։ Զժողովն անւոյ յորում ընկեցին զտէր Վահան յաթոռոյն. Մատ-թէոս Վանաց երէց ուռհայի ի տարեգիրս իւր, սամուէլ անեցին. Կիրակոս գանձակեցին։ Զժողովն անւոյ՝ որ ի սակս տեառն պետրոսի գետադարձին. մատթէոս Վանաց երէց ուռհայի՝ ի նոյնն. Կիրակոս Գանձակեցի։ Զժողովն քեռնոյ. Ներսէս շնորհալին՝ ի վի-պասանութեան նախնեաց՝ (այսմ չեմ ես անձամբ տեղեակ՝ այլ ի գրուածոց մեր վեր. Հայր Իգնատիոսին առի)։ ԶԳրիգոր տղայի ի տարսոն։ Գործք ժողովոյն և թուղթք տեառն Գրիգորիսի, Ներսեսի. և Գրիգոր տղայի և Կիրակոս Գանձակեցին։ Զժողովն որ ի մեծն հայք վասն տօնելոյ զտօնս ըստ ամսոյ ևն. Կիրակոս Գանձակեցին։ Զկոստանդնի ի սիս առաջին. Կիրակոս Գանձակեցին։ Զկոստանդնի ի հռովմկլայն. Կիրակոս Գանձակեցին։ ԶԳրիգորի անաւարզեցւոյն ի սիս. Բ. Ճառընտիրն. ի Կալանէ յիշատակեալ. Զկոստանդնի Կեսարացւոյն յատանայ. նոյն Ճառընտիրն ի Կալանէ յիշատակեալ։ Զժողովն ի մեծ հայք՝ յորում ի բաց կացին յաթոռոյն սսայ. Թումա ոմն վարդապետ պատմաբան, ժա-մանակակից յոհաննու որոտնեցւոյն։ Զժողովն յէջմիածին՝ յորում ընկալան զգլխաւո-րութիւն եկեղեցւոյն հռովմայ. և զժողովն ի կարին յորում ի բաց եկաց յաթոռոյ տէր սահակ ահագինն. չունիմ ի պատմագրաց ինչ ցուցանել՝ զի յայսմ դարու են եղեալ, և թէ զրեաց ևս ոք զանցս ժողովոցս, չև ևս էհաս ի ձեռս մեր. ուստի և ի հաւատս պատ-մողացն է ապաստան։...

Ի վենետիկ յամի տեառն 1772 մարտի 23 — Կուաստ ծառայ Հ. Պետրոս Վ. Կ. Մ.

ՅԸ.

Դարձեալ յոյժ շահեկան տեղեկութիւններ Տէր Կոմիտաս վկայի փառաւորու-թեան մասին, ուր կը փայլի միանգամայն Միաբանութեանս կողմանէ ի սկզբանէ եղած ամենամեծ յարգանքը։ Վաւերագիրս կը յիշատակէ նաև Եր. Վկային տապանագրին յօրինողի որոշ անունը (Հ. Մկրտիչ Անանեանց)։ Կը հաղորդուի նաև Երանելւոյն գերեզմանին վրայ արդարօրէն պատուհասեալի մը ծանր դէպքը։

Գերապատիւ Գերյարգուրեանդ ողջոյն խոնարհական

1772 *ի մայիսի* 18

... Յայսոսիկ աւուրս ընդ յովսէփ աղային փափազողլուէնց, որք սաստիկ բարե-կամք են Գերյարգութեանդ, և միաբանութեան մերոյ, և ինձ, և երախտաւորք յոյժ, չոքայ յուխտ գերեզմանի երիցս երանեալ տէր Կոմիտասին. և վասն միաբանութեան մերոյ՝ ետու օրհնել զգերեզման նորա տասն քահանայիւք...։ Եւ յետ օրհնութեանն, ի գուեմ անկեալ առ գերեզմանաւ նորա, աղօթս հոգեհառաչս վասն միաբանութեան մերոյ, և վասն իմ և վասն երախտաւորաց մերոց մատուցի առաջի նորա։ Եւ յետոյ ապա զՀայր մկրտչեան գեղեցկահիւս ուտանաւորս գերեզմանի նորա ընթերցայ. և ուրեք ուրեք ի մեկնելն իմ զբանս նորա, քահանայն գերեզմանականք որք առընթեր իմ կային,